

ԻՐԱՎՈՒՆԿ

ՄԱՍԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱՇԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսի համար Տարեկան 12 ֆր.
» Կեդանեայ 6 ֆր.
Արևմտահայերի համար (Երկու քիւր մեկ
համար) Տարեկան 14, փեդանեայ 7 ֆր.
Ամերիկայի » 2.60 տղ. փեդանեայ 1.50
ԿԱՆԻՍԻՆՈՒ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրիկ հետեւեալ հասցեով

ԽՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ Ս Ռ Ն Ս. (Պուլկարիա)

Редакция на ВѢСТНИКЪ

„ИРАВУНКЪ“

ВАРНА (България)

Rédaction du journal

„Iraounk“

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն ընդունուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Խմբագրութեան տղր 20 սանթրիմ. երե-
փեկ տեղի անկամներու համար 20 0/0
գեղջ կը շինի:

ԵՐՈՊԱ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ

Հազիւ Հարաւային Աֆրիկէի
պատերազմին վերջին ողբերգական
վարագործը դոցաւելու վրայ էր,
աճա յանկարծ Չինական խնդիր
ընդ որ տիեզերական խնդիր մը
ըլլալու հանգամանքը ունի՝ հրեւոն
կիւնէ:

Մեծ տէրութեանց շահատակու-
թեան, ժողովուրդներու բախտա-
խնդրութեան առարկայ եղող այդ
երկնային կայսրութեան լայնա-
ծաւալ երկրին՝ հանգեռն իր 400
միլիոնի մօտ բնակիչներով, այսօ-
րուքնէ որպիսի կերպարանափո-
խութեան ենթարկուելը այժմէն
ոչ ոք կրնայ գուշակել: Բայց այս
խոն անժխտելի է թէ, այդ ա-
ռիական վիթխարի ու փայլա-
կայսրութիւնը, իր բարձունքէն
զլորով, ի մօտոյ ծունը պիտի
գնէ քաղաքակիրթ աշխարհի զօ-
րութեան առջեւ, ու թերեւս Բե-
քինի կառավարութիւնը այլ եւս
Չինական ըլլալէ դադրի:

Այս հրատապ խնդրոյն հանդէպ
ի սկիզբն Եւրոպայ որքան ալ ներ-
շնչակ ու համբարաչի երեւել կը
կրտէր, դարձեալ իր այս համե-
քաշխութիւնը կեղծ էր: Իրարու
ներհակ պետական շահեր մեծ տե-
րութեանց միշտ կեղծաւոր ու երկ
գիւծի աշխարհավարութիւնը կը
մատնեն:

Քաղաքակիրթ աշխարհին այս
շահամոլ աշխարհավարութիւնը,
քաղաքական մը եղած էր վայ-
րենի ու ոճրագործ կառավարու-
թեանց, գրաւական մը իրենց դու-
րած ոճիրներու անպատիժ մնա-
լուն:

Սակայն այսօր, եթէ չենք սը-
խալիր, Չինաստանի անակնկալ
գեղքերը Եւրոպայի այս նողկալի
աշխարհավարութիւնը յեղաշրջե-
լու բնոյթն ունին: Եւրոպական
խաղաղութեան ու քրիստոնէայ բը-
նակիչներու ջարդը պետութեանց
լիզբը ցնցեց. սարսուռ մը պա-
տեց ամեն կողմ. Եւրոպայի ուսան-
դական երկդիմի քաղաքականու-
թիւնը ինքնաբերաբար ջուրը ին-
կաւ: պատասխանատուութեան
ձայնը մեծ կարծուած պետական
անձերը զղրդեց:

Բանակներ այսօր ճանաչալ կե-
նեն, վրէժն լուծելու այն անմեղ-
ներուն, որք գաղանային դրու-
թեամբ ջարդուեցան ի Չինաստան:

Չինաստանի օրուան գեղքերուն
ծագումը շատեր կը հետաքրքրեն:
Չինացեաց Պօքսէյ անուամբ յան-
կարծուտ խրատման ու քրիստո-
նէից դէմ փայլաւ առիւթեան
շարժառիթը ցարդ անմեկնելի մը
նայած է. գաղանք մ'է այս որ
անշուշտ օր մը պիտի պարզուի:

Այդ երկնային կայսրութեան հո-
ղին վրայ ապրող, ու Չինացիին
բարբիտ ու վարքին մօտէն ծանօթ
նշանաւոր անձնաւորութիւն մը կը
յայտարարէ թէ՝ իսլամութիւնը ի
Չինաստան արագապէս յառաջդի-
մելու, ու իր ազդեցութիւնը օր
քան զօր աճելու վրայ է: Բազմա-
թիւ գաղտնի ընկերութիւններ
կազմուած են, որոնց վառարանը
մօտէն իւնիւնին, իսկ կեդրոնը շատ
հեռուն, Կ.Պոլսի է: Համիդապա-
կադիտէն Եւրոպայի պաշտօն մէջ
հիմնուած, աջակցութեամբ Մէք-
քէյի նշանաւոր իւլեմաներու ու
Սէֆաւիտներու ու թաթարիստա-
նի Տէրփիշներու:

Բայց այս գաղտնի ընկերու-
թեանց նպատակն է Պուտուայա-
կան Չինաստանի իսլամացումը. ու
քրիստոնէից բնաջնջումը:

Այլ եւ այլ ծածկանունն են.
քիւ, Տոն-Կանի. Հեօյ-Հեօյ, եւ
այլն, Մէքէյէն ու Աւղանիստանէն
տեղիւններ, ներշնչեալ համիդա-
պադիտէն իտէալէն, կը դիմեն ե-
ղեր ի Չինաստան, կը հաւաքուին
եղեր գաղտնագողի. կը քարոզեն
եղեր բազմութեան առջեւ. անա-
պատներու մէջ իսկ. «սպաննեցէ՛ք
«քրիստոնէաները, իրենց կիները
«ու գաւառները. գրաւեցէ՛ք ինչ
«քերներն. այրեցէ՛ք իրենց աղօ-
«թիւտեղիները. շարշարեցէ՛ք քը
«քրիստոնէացած չինացիները եթէ
«մերժեն ուրանալ քրիստոնէու-
թիւնը»:

Չինացեաց օրուան աղօթքը ե-
ղած էր այս պատուէր. կը կրկ-
նուէր օրը 50 կամ 100 անգամ
ներ:

1878ին, վասիլիէֆ Ռուս պատ-
գամաւորը, ի Չինաստան ուղեւոր-

րութեան միջոցին տասը միլիոն
հաշուած էր անդ մահմադականաց
թիւը: Բայց ըստ 1898ի Պոլսոյ
համալսմական քօմիթէին շինած
տեղեկագրոյն, այդ թիւ 80 միլ-
եօնի բարձրացած գտան:

Թէեւ այս թիւ քիչ մը չափա-
զանցուած կը նկատուի. այլ սա-
կայն այս չափազանցութիւնը նը-
շանակադրական էր. իսլամու-
թեան այնպիսի արագ յառաջդի-
մութիւնը Պոլսոյ համալսմական
քօմիթէին քաջաւերական խթան
մը եղաւ:

Պ. վասիլիէֆ, Ռուսիոյ կայ-
սեր ուղղեալ տեղեկագրոյն մէջ
կըսէ, «Չինաստան մարդկային սե-
ռին մէկ հրրորդ մասը կը կազմէ:
Եթէ երբէք օր մը մահմադակա-
նութեան յարի, բոլոր Եւրոպայի
քաղաքական յարաբերութիւնք
անհունապէս կ'ընդունաւ:
Մահմադի կրօնը ճիշդալիմա-
րէն խաղաղական ու կիրանոսը ծա-
ւալելով վերայ նորէն քրիստոնէայ
քաղաքակիրթութեան սպառնալ»:

Չինաստանի օրուան պատմա-
կան գեղքերուն մէջ համիդա-
պադիտէն մատը կ'երեւի. համա-
խօհութեամբ արդի խնամակալ
կայսրուհին, որ թաթար ցիղէ է-
իշխան թուանի հրամանատար
Նիէի եւ Չու-քիւքի:

Այս նշանաւոր դերակատարներ,
վերջին տասնիմանի քրիստոնէա-
նաց, Պօքսէյ-Չինական բանակին
զլուխը անցած, ճիշդ տաճիկ կա-
ռավարութեան պտուտակաւոր ու
վարպետ քաղաքականութիւնը վա-
րել կուզեն: Օրինաւոր զինուորին
ներկայութեան անպաշտպան քրիս-
տոնեաները ջարդուի. Պօքսէյի դու-
րած ոճրագործութեանց, Չինա-
ցիին անպատասխանատու հրատա-
րակել, զօրութեան առջեւ վատ.
տկարին հանդէպ վայրագ ըլլալ:

Ապտիւլ-Համիտ իր գահակալու-
թեան թուականէն՝ իբր խալիֆ
համիդապադիտէն իտէալը, ամէն
իսլամաբնակ երկրներու մէջ ար-
ծարձել սկսաւ: Այսօր ուր որ իս-
լամ կայ, հոն կը տիրէ, եթէ ոչ
յայտնի, գոնէ լռելեայն, քրիս-
տոնէից դէմ առիւթիւն: Մահ-
մադական այս մոլեռանդութիւնը
այլ եւս անկարելի կ'երեւի մարիւ:
Իր օրով բոլոր հին եւ նորը

սուած թիւք նախարարք այդ ի-
տէալ նշանաբան ըրին:

Պուլկարիոյ ջարդերը, Եգիպ-
տոսի մէջ Արապի բաշայի յեղա-
փոխութիւնը ընդդէմ Եւրոպայի,
Ալժերիայի եւ Հնդկաստանի մերթ-
ընդ մերթ խլրտուումները, Հայոց
ջարդերը, կրեւտէի աւերումները եւ
դեռ վերջին օրերս, Անգղիոյ Թը-
րանսպալի հետ լրացած միջոցը,
առ Հնդկ մահմադական յեղա-
փոխութեան հրաւերն, որ երեւան
եղելով Սալիդալիի սպառնալի-
քին առջեւ ջուրը ինկաւ եւ բոլոր
այս եղելութիւնք օրուան Սուլ-
թան-Խալիֆին օրով տեղի ունե-
ցան:

Համիտ քաջաւերուած էր Պուտ-
տայական Չինաստանի իսլամաց-
ման գաղափարէն: Մէքէյի եւ
ուրիշ ուստատեղիներու Մուհամ-
մէտի առաքելները Եւրոպայի պա-
լատան հիւրերն էին, որք վարձա-
տրուած Նորին վահապառութեան
ընծաներով Կ. Պոլսէն ի Չինաս-
տան կը մեկնէին:

Վառնայի հետ թղթատարական
չոգենաւային յարաբերութիւն մը
հաստատուելու անկարող կառավա-
րութիւն մը, Ծայրագոյն Արեւել-
քի ջուրերը չոգենաւ զրկելու հա-
մարձակեցաւ, ուղղակի յարաբե-
րութեան մէջ գնելու համար խա-
լիֆանիստ մայրաքաղաքը Բեքիւնի
հետ, Հոգ չէ թէ այդ չոգենաւ
կէս ճանքան մնաց:

Չինաստանի յանկարծուտ գէն-
քի զօրութեամբ Միացեալ Եւրո-
պայի դիմադրութիւնը, ու քը-
րիստոնէից ջարդը գեղքերուն
ծագումէն մի քանի ամիսներ ա-
ռաջ, կրեւտացի Մահմադականին
ծանօթ էին, որ առանց խրոչե-
լու կըսէր. — «Պիտի տեսնե՞ք մօտ
օրէն թէ՛ իսլամին սուրը որչափ
երկար է եղեր»:

Շատ հեռու չէ այն օրը, ո'ւր
պիտի գրեւք. — Հազիւ Չինաս-
տանի խնդիրը գոցուելու վրայ էր
եւ աճա Տոհմաստանի խնդիրը ե-
րեւան եղաւ:

Միհրան Աղառ
Քանիա

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Ամերիկայի իր Մարտիկա միացած են առաւել կամ նուազ ժամանա- կամիցի մը համար, տեսած են անշուշտ հին աշխարհի բոլոր հա- յաբնակ կողմերէն Ամերիկա մեկ- նող հայ խումբերը, որոնք հակա- ռակ եղած ազգաբարձութեանց միշտ բազմանալու վրայ են:

Աւերորդ կը համարիմ քննել այս գաղթականութեան շարժառիթ- ները, որոնց մեծագոյնը և հան- րածանօթն է թուրք հայրախը- նամ (Հ.Ս.) կառավարութեան ըն- թացքն, որով զմեզ մեր բազմա- դարեան հայրենիքին մէջ ապրե- լու անկարելիութեան մատնած է, նաեւ մերձակայ երկիրներու դրա մական տագնապն ալ կարեւոր դեր մը կը կատարէ մեր հայրենակից- ներու մինչև Ամերիկա գաղթե- լուն:

Ակնհիւս է թէ այդ գաղթումը կասեցնելու ուրիշ միջոց չկայ, Հայրենիքի արդի դժոխային վի- ճակի բարեփոխման դատ. սպասե- լով այդ միակ և հիմնական դար- մանին, հոս պիտի ջանամ քիչ մը բացատրել մեր ժողովրդեան ու- միկ դասակարգին, քանի որ Ամե- րիկա մեկնողներու մեծագոյն մա- ռը այս դասակարգէն է— թէ ինչ պայմաններու տակ մէկը կրնայ հաց գտնել նոր Աշխարհին մէջ:

Ա. Մեր ազգակիցներու մեծա- գոյն մասը, եթէ չըսենք բոլորն ալ, հոն գործաւորութիւն կրնեն: Գործարանին մէջ ի հարկէ դիւրին գործեր կըլլան, որոնց մէջ բիրտ ուժէն զատ խելքն ալ իր բաժինը ունի, բայց ատենք վերապահուած կամ գրաւուած են Եւրոպի երի- տասարդութիւնէն: Օտարական հա- յը կընդունուի գործարանին մէջ, պայմանաւ որ ծանր և աղտոտ գործեր ընել յօժարի:

Ամեն պարագայի տակ հիւան- դոտ և տկար անձինք երբեք Ա- մերիկա երթալու չեն. զի ոչ մի- այն կառավարութիւնը զանոնք ետ կը դարձնէ, այլ հոն իրենց կըս- պասէ յուսալիւսութիւն և որն ա- լելի սոսկալին է մահ օտարու- թեան մէջ:

Անհասկցողութիւն չըլլայ, նոր աշխարհի մէջ բաղդ փնտելու ել- նողները անպայման կերպով ա- ռողը ու զօրաւոր ըլլալու են մաս- նաւորապէս և աչքերը տկար ըլլալու չեն:

Բ. Ամերիկեան կառավարութիւ- նը հոն հասնող մէն մի անձէ կը պահանջէ դրամական կամ անձնա- կան երաշխաւորութիւն. դրամի քանակութիւնը առ նուազն 100 Փրանք լինելու է. արդ մէկը հոն հասնելուն կամ այդ գումարն եւ կամ զինքն ընդունելու համար ո եւ է քաղաքի մէջ բարեկամ մը ունենալը ապացուցանելու է. հա- կառակ պարագային երկրին մէջ չընդունուիր:

Յայտնի է թէ այս կարգադ- րութիւնը խիստ բանաւոր է. հոն

հասնող օտարականը մինչև գործ գտնելը կամ դրամ ունենալու է և կամ իրեն օգնող բարեկամ մը:

Գ. Երկրին մէջ տիրող չեզոքն Անգլիերէնն է. հարկ չիւ տեսներ բացատրելու թէ, մարդ որքան աւելի շուտ և լաւագոյն կերպով կրնայ յաջողիլ, եթէ տեղական լի զուին ծանօթ լինի. խորհուրդ կու- տամ, որ, եթէ կարելիութիւն կայ, հոն երթալէ առաջ Անգլիերէնը մի քիչ սովորին:

Դ. Ինչպէս ամեն քաղաքակիրթ երկրի մէջ, հոն ալ բարուց ազա- տութիւնը բացարձակ է. կը փա- փաքէր որ հոն դաշոյ մեր ազ- դակիցները, զօրաւոր կազմի հետ ունենային նոյն բարոյական կորո- վի նկարագիր, չմոռնալու համար իրենց ազգը, ընտանիքը, որպէս- զի այնչափ դժուար աշխատու- թեամբ վաստակած տղարները, չը վատնուէին հանրակնով և գործելու թի գաւաթներու անբարոյականա- ցուցիչ ազդեցութեան տակ:

Աւագ շատեր ունինք, այս դա- սակարգէն ամեն տեղ. մանա- նաւանդ այս հեռաւոր երկրին մէջ այդ ընթացքի հետեւողներէն ա- մեն յոյս կորելու է. անոնք ան- պայման կերպով կորսուած էակ- ներ են հայրութեան համար:

Ուրիշ յօդուածով մը մանրա- մասնօրէն պիտի բացատրեմ Ամե- րիկա երթալու համար ամենէն ա- ժան և արագ ճամբաները և ու- րիշ մասնաւոր ծանօթութիւններ:

Եւանքի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՆ

Թ. ԲԱՋԱՐԸԸԳ 11 Յուլիս

Ինչպէս յայտնի ճշմարտութիւն մ'է որ տեղւոյս բնիկ Հայութեան մէկ մասը իրեն առաջնորդ ունե- նալով Գ. Նալպանտեան անուն վար- դապետը՝ Պատրիարքարանի իրա-ւասութիւնը ստորնաջնել ջանացած է, կրքի և տեսլութեան համար. նոյնքան ճշմարտութիւն է նաեւ վերջին թաղ. խորհրդոյ ընտրու- թեան կառավարական հրահանգով կատարուելը: Եւրոպական մեծ. նա- մակագիրը թող ուզածին չափճը ու ճաշ թէ՛ «ընտրութիւնը Մահա- նադրութեան օրինօք եղած է»: Մեր գիտցած սահմանադրութիւնը չարտօնէր 22-23 տարիքը ունե- կողներու քուէ տալ, ինչպէս նաեւ չի կայ յօդուած մը որ տիրող կա- ռավարութեան հպատակներու «մի- այն» ընտրական իրաւունք տայ: Չիւ ուզել կարգ մը նշանակելի զեղծումներու վրայ ևս խօսիլ որ արդէն ծանուցուած է:

Թարգելի նամակագիրը ու իր վարպետն կրնա՞ն ըսել ու մասնա- նիշ ընել թէ՛ որոնք են այն զեղ- ծումները (*) որք գործուեր են

(*) Գէորգ Վ. Նալպանտեան ալ Եւր- ժումի 238 թիւի մէջ, նախորդ ընտ- րութեան մէջ զեղծում կար ու Պատ- րիարքարանը վաւերացուց կրքէ. այս խօսքերէ բացայայտ կը հասկցուի թէ՛ Նալպանտեան, Պատրիարքարանը օրի- նազանց ճանչցած է. հետեւաբար հե- ղինակ կառավարութեան զիմելու ծը- րագրին. սա իր խօսքովն իսկ կը հաս- տատուի:

նախորդ ընտրութեան մէջ, որուն վաւերացուելէն յետոյ ընտրեալը հրաժարեցան:

Եթէ տեղւոյս լրջամիտ մասը, Պ. Նամակագրի բաժին պէս, փառասիրութիւն և հաստիրութիւն ունենար, ինչու արդէն ձեռք ձը- դած պաշտօնէն հրաժարէր ու նոր ընտրութեան մէջ կրկին չաշխա- տէր վերստին ընտրուելու. ահա-ւասիկ անտրամաբան խօսք մը, ստույթիւն մը: Նորընտիր թաղ. խորհուրդը իր հրաժարականը տա- լէ առաջ արդէն որոշած էր գոր- ծէ քաջուիլ և վերընտրութեան մը երբէք չի մասնակցիլ. և ոչ մէկու մը բաւած է թէ պէտք չէ ընտ- րութեան մասնակցիլ, ժողովուր- դը հրապարակային հրատարակու- թեան և խնդրոյն մօտէն տեղեակ լինելով ինքնին չէ մասնակցած:

Մենք հրապարակաւ րսինք թէ ընտրութիւնը կառավարական օրի- նօք պիտի ըլլայ, ոչ թէ «կառա- վարական բարձր պաշտօնէի մը հսկողութեամբ»: ահաւասիկ սուտ մը ևս. սո՞ւտ է արդեօք երբ դար ձեռլ կրկնենք թէ վերջին ընտրու- թիւնը կառավարական ուղղակի կամ անուղղակի հսկողութեամբ եղաւ. ի՞նչ գործ ունէր վարդա- դետը ընտրութեան 3 օր առաջ ոստիկանապետին քով, Գէորգ Վ- արդէն ինքը պաշտօնապէս պաշ- տօնական անձի մը յուլիս 10 ին չէ՞ ըսած թէ «ընտրութեան տե- ղեկագիրը արդէն զրկած ենք նա- խարարութեան եւ վաւերացման կըսպասենք»: Գիտեմ որ ըստ իր սովորութեան այս ալ սուտ պիտի հանէ, այն ատեն վկաներով պիտի խօսիմ ու թերեւս այն ատեն պի- տի կարմրի: Կառավարութեան իր հասցէին եկած նամակը որ 3 ան- դամ զատ զատ պատուաւոր անձ- նաւորութիւններ խնդրեցին ինչու- չը յանձնեց:

Չը գիտենք թէ ուր պիտի հաս- նի քաղքիս ալգը կացութիւնը: Եւրոպական մեծագոյնը նամա- կագիրը ինչու իրողութիւնները կը խեղաթիւրէ:

Վարժարանի քննութիւնը այս տարի անձայն և անշուշտ եղաւ, առանց մէկու մը իմաց տրուելու, ինչպէս կըլլար նախորդ տարիներ. ասոր մէջ արդեօք ի՞նչ գաղտնիք կայ . . .

Ծ. Խ.

Մեզ ուրիշ երկու նամակներ ալ եկած են որոնք կը հաստատեն թէ վեր- ջին ընտրութիւնը Աղգ. սահմանադրու- թեան հակառակ եւ կառավարական օ- րէնքին համաձայն եղած է. այսինքն 25 տարեկանէն վար եղողներ քուէ տուած են, պաշտօնապատակ չեղող ներք քուէ տալու իրաւունքէն զեր- կուած են և Գէորգ վարդապետ գաղտ նապէս տեղւոյն կառավարչին հրահան- գովը գործած ու ընտրութեան տեղե- կագիրն ալ նախարարութեան զրկել տուած է ի վաւերացումն:

Մեզ հասած այս տեղեկութիւններէն կը հասկցուի թէ Գէորգ վարդապետ եւ իր համախոհները թէ՛ Գեր. Այցելու հովիւը խաբած են եւ թէ՛ խմբագր- ները, համոզել ջանալով թէ ընտրու- թիւնը սահմանադրութեան օրինօք ե- ղած է, մինչդեռ իրենք հետեւած են կառավարական օրէնքին եւ ըստ այնմ ալ տեղեկագիր տուած:

Ըստ մեզ կարծէ որ Գեր. Այցելու հովիւը Թ. Բազարճեզ փութայ եւ եթէ այս տեղեկութիւնները հաստատուին անմիջապէս բեկանէ ընտրութիւնը որ պէտքի ուրիշտեղեր ալ նոյնը չկրկնուի:

ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՇՈՒԿԵԾԻՍ
"ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ" ԵՐԿՍԵՈՒ ՈՐԱՄ.
ԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՌՆԱՅԻ

1900 ապրիլ 1 — 1900 Յուլիս 1
ՄՈՒՏՔ

142 անդամներէ (*) հաւաք	
ուած բաժնեգրներ	411.30
Հաւաքուած նուէրներ	77.50
Տիկնանց Մասնաճիւղի եր	
կամեայ հաշուեկշիւէն	47.80
	536.70

ԵԼՔ

Թուղթ պանարան	1.80
Ընկալագրերու ծախք 2	
անգամի համար	20.75
Ընկերութեան կնիք չի-	
նելու երկու անգամ եւ կոթ	4.40
Ընդօրինակութեան տոմար	
վրձին եւ այլն	4.—
Երեք հատ տոմարի գին	1.45
Փօշթալի փութի	1.20
Հաւաքչին	17.90
Պատրաստ դրամ (**)	485.20
	536.70

Ատենագիր Ատենագիր
Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ Յ. ԲԱՐՍԵՍԵԱՆ
Գանձապետ
Ս. ԱՋՆԱԻՈՐԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Այս միջոցիս հեծելանելով Բարի- ալցեղները խիստ շատ են: Բեթիւս- պուրի համալսարանի ուսանողներէն մին Յուլիս 5ին Բեթիւսպուրի մեկ- նելով Յուլիս 29ին Բարի կը հանի որ 2,750 փութէ թէ Յիշու ուսա- նողը քանի մը օր Բարի լինալէն ի- տոյ, կրկին հեծելանելով ծամբայ ե- լած է Զուրիգիոյ ու Աւստրիոյ ճակ- բով Ռուսաստան վերադառնալու հա- մար:

Նոյնպէս կիմացուի թէ արտակերտ ծրարասցի մալ պատրաստուեր է իւ- առաջէն անգործ մեծութեամբ տա- կառ մը գլորոցներով մէկ քանի ֆրան- սական քաղաքներէ անցնելէ յետոյ ար- ուեստահանդէսը այցելել:

(*) Ընկերութեան անդամներու ու նուիրատուներու անուններու ցանկը եկեղեցւոյ դուռը պիտի կախուի:

(**) Տիկնանց Մասնաճիւղի հաշու- կշիւը կը կազմէ հետեւեալը.
Մայիս եւ յուլիս ամսուան
բաժնեգրներէ 29.80
Նուէր 1.—
Աղջկանց վարժարանի ու- սանողներէն 4.40
Հայկ. Կրթարանի երկսեռ ուսանողներէն 19.20
Թուղթի ընկալագրի եւ տո- մարի ծախքեր 6.50
47.90

(***) Վարաքալ վանի որբանոցին մէջ խնամուելիք մէկ որբի տարեկան ծախ- քի ստակն Պատրիարքարանի միջոց- պիտի զրկուի քիչ օրէն: Իսկ Սեփա- տիոյ եւ Ակնայ Որբանոցներէն իւր պատասխան աւելուած չէ հոն խնամ- ուելիք որբերի նկատմամբ:

—Պոլսոյ յունական թերթերը կը գրեն թէ Այա-Փարոս եւ Ֆէշէր ըս-
նած թաղերուն մէջ տեղի գետնին
տաշին կարգ մը հին պատկերներ
նուաճ են, որոնց մէջ Մաքսիմիանոս
եւ Դիոկղեայի նուաճութիւնները
նկարներն են, որոնք կը կան
եղբոր։

—Օտէսայի մեծ ընտանիքներէն եւ
Սէֆաստարոյի պահակազօրքէն զինուո-
րական սպայ մը երկար ժամանակէ ի
վեր սիրահարած է եղբոր նոյնպէս Օ-
տէսայի բարձր դասուն պատկանող ման-
կանը, որ յաջորդաբար Սպային իշխալ ազ-
գային համալսարանէն համար ըրած ամեն
լինքն ու աղանդէր անօգուտ կըլլան
եւ զինքը կը յաճատեցունեն։ Գրե-
թէ սիրահարը վերջին փորձ մը ընել
կողմէ իր յամառ սիրտէն իմ տեղ եւ սա
կայն վերջնականապէս կը մերտնդի,
ստոր վրայ խելայեղ ատրճանակով սր-
տէն կը զարնէ աղջկը եւ յետոյ ինքն
ալ սիկառէթ մը վառելով անձնապահ
կըլլայ։

—Բէշթայի մէջ գնչո՞ւ հրաժխտե-
րու երկու խումբ կատաղի կոխի մը
կը բռնուին մրցումի մը պատճառաւ,
երկու կողմէն հինգ մեռել եւ ութ վի-
րաւոր կուռնեան։

—Ռուսիոյ մէջ մեծահարուստ Յոյն
Յը 85 տարեկան, վեց զուակ ունենա-
լով հանդերձ, իր ընդարձակ աբարթը-
մանին մէջ առանց սպասաւորի ընդ-
րովին առանձին կապէր։ Երկու պա-
տանիներ, մին 17 իսկ միւսը 21 տա-
րեկան հետակայ Ռուս պանդոկի մը ըս
պատահարները, գողութեան համար կը
մտադրեն սպանել այդ մարդը։ Եւ կը
մանեն անոր աբարթըմանը մերտնդին
ձեռքէն եկած գիւղացի թիւնը կընէ
այդ մատաղ ոճրագործներուն ձեռքէն
օձիքը ազատելու համար եւ կը յաջողի
անոնցմէ մին ոտքէն վիրաւորել ըն-
ժովէրով, բայց պատանիները զինքը
կը պառկեցնեն եւ դաշունահար ընելէ
վերջը կը փախն։

—Վիլնէյի կայսեր մայրը Յրէտէրիք
կայսրուհին որ Անգլիոյ թագուհին ազ-
լին է, ծանրապէս հիւանդ է։

—Պարսից Մուզաֆֆէրէտին Զահը
Քոնթէքէսէիլ գտնուած միջոցին, մէկ
ամսեան մը մէջ 20,000 ոսկի ծախ-
ած է, առանց հաշուելու տուած զա-
նազան պարգեւներն ու նուէրները։

—Պոլսոյ թիւրք լրագիրները կիմացը

նեն ի՞նչ արեւելեան երկաթուղիներու
վերջի վիճակահանութեան մեծ պար-
գիւր 600,000 ֆրանք Գրիգորեան ա-
նուն հայ ուսուցիչ մը շահեր է։ Յիշ-
եալը Պանքային ներկայանալով ստա-
ցեր է պարգեւ։ Եւ ուզած է նոյն տե-
ղի սպասաւորին գարգեւ մը տալ։ . .
20 դրուշ։

—ՀՐԱՇԱԼԻ ԲՈՅՍ ՄԸ. — Ձինաս-
տանի Թէպէթ նահանգին մէջ, ուր կը
գտնուի Պուտոս յալաններու կրօնա-
պետը, իր Լամայարաններովը (Պուտ-
տայական վանք) եւ բազմաթիւ տա-
ճարներովը նշանաւոր Լիուսար գիւղը
հրաշալի ծառի մը գոյոյ թիւնը կը պատ-
մուի։ Երբեք իւրաքանչիւր տեղեկները
հազարէն գումարներու փոխարէն կը
ծախուին եղբոր այդ տեղեկներուն վը-
րայ թիպեթական գիրերէն գտնուելուն
համար։ Եւ Թէպէթից կը պատմեն թէ
իրենց այրենարանը այսպէս ինքնին
բուսած է։

Բայց այս ծառի գաղտնիքը Պուտ-
տայական լամա մը կաթովի կրօնքը
ընդունելով մէջ տեղ հանած է սապէս.
Թէ գարնան մինչեւ իսկ ամառը ճար-
պիկ լամա մը ձեռնամաժով այդ ծա-
ռին տեղեկներուն վրայ կը տպէ եղբոր
հետեւեալ բանաձեռն սկզբնական տա-
ռերը (Օ-ի մանէ բառօնէ օմ) (փոքր
Պուտտայի ի Լուտտա)։ Ինչպէս նաեւ
ծառին կոճղին վրայ ալ եւ այդ կո-
ղեւներն ու տեղեկները կրօնամոլ սյ-
ցելուներուն կը ծախուին մեծամեծ
գիներով։

Այդ Լիուսար գիւղին մէջ գտնուած
Պուտտայական բազմաթիւ տաճարնե-
րէն, էն մեծին մէջ կայ Պուտտայի ար-
ձանը որուն համար կըսուի թէ համակ
ոսկի է։

ԼՐԱՔԱՂ

Գարակէօմբիւկի Ս. Յովհան Ոս-
կեմբեան եկեղեցիին, որուն ալիւրը
իմացուցած էինք, գոյքերը եւ
թանկագին առարկաները մեծ մա-
սամբ աղատած են, չնորհիւ նոյն
եկեղեցւոյ լուսարարապետ Տ. Ա-

րիստակէս քահանային, որ հրգե-
հի միջոցին փութացիր է այդ
թանկագին առարկաները եկեղեց-
ւոյ բարուկիւր նկուզին մէջ պա-
հել։

Նոյնպէս եկեղեցւոյ շէնքն ալ
չնորհիւ Ունեհան Աբիկ էֆէնտի
600 ոսկի ապահովագրուած է ե-
ղբոր Ռոստիս ընկերութեան։

—Նիկովիցիոյ Ազգային երկսեռ
վարժարանները, այս տարի 5 աղ-
ջիկ, 2 մանչ ընդամենը 7 ընթեր-
ցաւարտներ ունեցած են։

—Յակոբ Սուքիասեան անուն
Պոլսեցի գինեգործ հայ մը,
Չիկակոյի Յուդահանգէսին իր շի-
նած ընտիր գինիներուն համար
յատուկ մրցանակ ստացած էր այս
անգամ ալ Յուդահանգէսի մրցա-
նակաբաշխ մասնագէտ նախագահ
Պ. Ի. Տիպուարի կողմէ հրատարա-
կուած անգղիներէն տետրակի մը
մէջ մեծ գովեստով խօսուած է
այդ արհեստագէտ հայուն վը-
րայ։

—Յունիս 16ին Թիֆլիսի մէջ
վախճանի է հանրաժանօթ օրէ-
նագէտ եւ Թիֆլիզի դատարանի
երգուեալ անդամ Գարբէլ Տ.
Ստեփաննան, ինչպէս կիմանանք
հանգուցեալը թէ հայ եւ թէ օ-
տար չըմանկներու մէջ էն կարե-
ւոր տեղերէ մին կը բռնէ եղբոր,
հանգուցելոյն յուզարկաւորութեա-
նը մասնակցած են նահանգին գին-
ուորական, քաղաքական դատա-
րանի անդամները, նախագահնե-
րով, Թիֆլիզի երգուեալ գատա-
ւորները ամբողջ։ Նոյն օրն ալ
Թիֆլիզի բանտի հայ եւ օտարազ-
գի բանտարկեալներուն խնդրանք
բանտի մատրան մէջ հոգեհանգս-
տեան ազօթներ կատարուեան են։

—Կարնոյ Սանատրեան վար-
ժարանը այս տարի 10 ընթերցա-

ւարտներ ունեցած է. որոնք բա-
ցի այդ հաստատութեան մէջ ա-
ւանդուած ուսմանց, գիտութեանց
եւ լեզուներու մէջ ըրած յառաջի-
մութիւններէն, սովորած են նաեւ կա-
րեւոր եւ ընթացիկ արհեստներ.
ասոնց իւրաքանչիւրը օգնական
վարպետի վկայագիր ստացած է։

—Տեղւոյս եկեղեցւոյ դպրաց
դասը իր կազմութեան առաջին
տարեգարձին եւ վաղուան պայծա-
ռակերպութեան ասոնին առթիւ Ս.
Պատարագի երգեցողութիւնը հ.
աւճայն պիտի կատարէ, ընդ ա-
ռաջնորդութեամբ ծանօթ դպրա-
պետ Տ. Միհրան Ճէրահանի, որ
յատկապէս հրաւիրուած է դպրաց
դասուն կողմէ։

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Քրիէն յուսած գիւղացի Մէծիկ-
եան թաղէն անուն երիտասարդը
կը փնտռուի իր եղբոր կողմէ.
արդ իշխալին ուր ըլլայր եւ կամ
հասցէն գիտցողներէն կը խնդրուի
որ հոգին խմբագրութեանս իմաց
տալ։

ՆԷՏԱ

4 Մ Մ

(ՄԱՄՈՒ ՊԱՏՄԱՆԸ)

Պուկարիոյ ազատութենէն ա-
ռաջ Պուկար ժողովուրդին նիստ
ու կացը եւ թրքական հարստահա-
րութիւնները նկարագրող այս գոր-
ծը կարծէ որ ամեն հայ կարգաւոր
կը ծախուի իրաւունքի խմբա-
գրատունը, Ֆիլիպէ Պ. Գ. Թիւ-
թիւնեանի քով եւ Գահիթէ Պ. Կ.
երգեկացեանի խանութը։

ԳԻՆ 30 ՍԵԹ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՆԵՐ

(ՊԱՅՏԵՐ ՄԸ ՅԱՅԿԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՐԷՆ)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

[3]

Վերջին տարին, առաջնորդ Հայր Սուրբը խու-
թիկ գեղը այցելելէ ետք. նոյն գիւղի ուսուցիչ
ու մէկ քանի իշխաններու հետ այցելեց մեր վար-
ժարանը, անձամբ քննեց մեզի մեր ընթերցմանց
մէջը, ու երբ նկատեց որ, այլ եւս Սամուէլէնց
Տէր Յակոբը իր մտաւոր պաշարով անբաւական էր
մեզնէ ուսանց պահանջում տալու, գիւղի համայնքէն
ընդունուր ժողովը գումարներով, ու ամենու համա-
հանութիւնով, Տէր Յովհաննէսի միամօր որդին,
20-21 տարու աշխոյժ ու քաջ երիտասարդ Պաղտա-
սարը ուսուցիչ կարգեց «Աստուծան վառժարանին»
Ան՝ այսպէս կը վերջանար, մեր մանկական ա-
մենացանկալի դպրոցական շրջանի առաջին պատ-
կերը։ Իրերու բնական բերմունքով մը, մենք կան
շատուէինք Տէր Յակոբի սիրալիւր վարմունքէն։
Ա՛լ Տէր Հայրը մեզի համար օտար մըն էր... ան,
որուն անկեղծութեան ու մտքորոշութեան խնամքը
ները ա՛յնքան առատ վայելած էինք, ամենքս ալ
յուզուած ու լալու աստիճան փոցկած էինք, որով
հետեւ՝ կը մտածէինք որ, ա՛լ Տէր հօր հետ՝ սի-
րուն դաշտերու, ծաղկաւետ կանտնիներու ու պա՛ղ
պա՛ղ աղբիւրներու շուրջ, թուլեններու ու վար-
դերու հետ, դաս սերտելու, երգելու ու գօտէմար-
տելու չպիտի երթայինք։ Կը ցուէինք, որ, ա՛լ
տէր հօր նման, ո՛վ մեզի պիտի առաջնորդէր դէ-
պի Տիգրիսի զեղեցիկ ափունքը, որուն վճիտ ա-

լիքներուն մէջ, ա՛յնքան անգամներ Տէր հօր հետ
լողացած ու ամենէն ճապուկ գորտի մը պէս լողալ
սովորած էինք։

Երբ՝ իր այս խախտուիչ խօսքերը եղբակցուց
մեծաւորը։ Իր ձեռքերը դէպի վեր, Հայրենիքի
պայծառ երկինքը տարածելով. օրհնեց ա՛յդ ման-
կական խումբն՝ իր ուսուցիչներով, Հուսիկ յետոյ,
այս խօսքերով վերջացուց իր օրհնները։ «Կը մող-
թեմ ըսաւ, Սահակայ Մեսրոպայ, վարդանայ ու
Մուշեղայ Աստուծամէն» որ, զգացողութեան ու ինք-
նաճանաչութեան հոգին զօրացնէ ձեր մէջը։ Նաեւ
յառաջընթացեալ զօրաւոր սէրը ձեր մէջ ներշնչե-
լով՝ այս սիրելի գիւղի ժողովուրդեան ապագայ մտա-
ւոր ու բարոյական կիանքը զօրանայ։ Իմ զաւակ-
ներս, ինչպէս ցոյց տուէր, դարձեալ ջանացէ՛ք
որ, ասկէ վերջ ա՛լ, ձեր նոր ուսուցիչ աշխատու-
թիւնները պսակէք, ու իմ սրտին ու ձեր ծնողը-
ներուն ուրախութիւն պատճառէք, եւն- եւն։» Ու
յետոյ մենք կարգաւ՝ Առաջնորդ հայրսուրբի ու
տէր Յակոբ հօր ձեռքը համարեցինք, մեկնեցանք
դէպի վերին դաշտը, մեր անմեղ զբօսանքներն ը-
նելու, ու յաջորդ օրը, դպրոցի Գրգ տարիշրջանը
շարունակելու...

Գ.

Փ. գիւղի տէր Յովհաննէս խուզոյեանի՝ մէկ հա-
տիկ որդին էր Պ. Պաղտասարը։ Անոր հայրը՝ սոս-
կալի խոտաբարոյ ու բժանիղի բնութեան տէր
մէկը ըլլալով՝ իր շրջանակին մէջ, փափաքած էր
իր գաւկիւն, կարելի եղածին չափ կրթութիւն տալ։
ՍՅ քահանան ունէր՝ եօթն աղջիկ ու մեկ մանչ։ Իր
եօթն աղջիկներն ալ գրեւ կարգաւ ուսած էին իր-
մէն, ու մեր գեղի մէջ, տարբեր աչքով կը նայուէր

անոնց վրայ։ Նախ, իբրեւ քահանայի զաւակ կը
յարգուէին։ Երկրորդ՝ իբրեւ գրեւ կարգաւ գիտցող
կիներ ու աղջիկներ՝ ամբողջ գիւղի ազգաբնակչու-
թեան կողմէ, անկեղծապէս կը մեծարուէին։ Տէր
Յովհաննէս՝ իր գիտցածին չափ իր սղուն գրեւ կար-
գաւ սորվեցնելէ ետք, Մամբէ հայրսուրբի մասնա-
ւոր թեւագրութիւնով՝ երեք տարուան չափ ա՛լ զա-
նիկայ քաղքի ուսումնարանը զրկած էր, Հմայեակ
վարժապետ Դիմաքսեանի, որ այժմ Ներսէս վարդա-
պետ Ուրախանեան աքսոր յերուսաղէմ։—Խնամեց
ներքեւ ուսանելու։ Իբր մտացի ու աշակերտ սան,
անիկա, այդ երեք տարիներու մէջ, իր եռանդուն
ուսուցչէն սովորած էր Հայերէն քաջ գրաբար, ու
ընթացիկ աշխարհաբարը, Ազգային ու օտար պատ-
մութիւնները, ընդարձակ։ Ազգային հին մատենա-
գիրները, ուշի ուշոյ վերլուծած, կրօն ու բարոյա-
գիտութիւնը, —բուսական ընդարձակ ու յայն կեր-
պով— թուաբանութեան, աշխարհագրութեան եւն.
գիտելիքներու մասին, ա՛լ իր չափազանց աշխատա-
սիրութիւնով գոհացուցիչ ծանօթութիւնները ամ-
բարած էր։

Իրօք. այդ առանձնապակութիւններով օժտուած
գեղջուկ, ուշի ու անխոնջ երիտասարդի մ՛այրպէս
գիւղական դպրոցի մը ուսուցիչ կարգուիլը ա՛ն ա-
տենները, 25—30 տարիներ առաջ, — իր տեսակին
մէջ խիստ նշանակալից՝ երեւոյթ մ'էր, ու մեզի
համար բախտաւորութեանը մեծագոյնը, ու մենք երբ
քիչ օրերէն տեսանք Պ. Պաղտասարի դասաւորու-
թեան եղանակն, ու սովորեցուցած ուսմանց տեսակ-
ները, առանց դժուարութեան ընտելացանք անոր.
ու անյազ հետաքրքրութիւնով մը կը հետեւէինք
անոր դասերուն ու հրահանգներուն։

ՂԱԶԱՐՈՍ Պ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ

(Շարունակելի)

